Արդէն մի քանի օր էր որ Բագուն համարեա պատրաստ էր այս ներկայ հանդիսաւոր աւուրն (հոկտեմբերի 8—1888), բայայայտ երեւում էր, որ բոլորը զբաղուած էին միայն մի նպատակով՝ այն է՝ կարելւոյն չափ սրտագին դիմաւորելու վաղուց սպասուած արքայական ընտանիքին։ Ամենայն անձնական բան թողուած էր, ամենայն շահ մոռացուած էր, ամենը միաւորուել են միմիայն տեսնելու անհամբերութեամբ ինքնակալ հիւրերին։ Երեկ վաղ առաւօտից ամբողջ քաղաքի շինութիւնները զարդարուած էին (транспортъ) թափանցիկ դրօշակներով ու զորգերով, որոնք ծածկում էին շինութիւնները։ Ամենքը ոտքի են կանգնել արդէն և ձգտում էին դէպի երկաթուղւոյ կայարանը սրտատրոփ ուրախ ոգեւորութեան մէջ, որը պայծառութեամբ փայլում էր ամէն դէմքի վերայ։

Ժամը 12ին հասաւ կայարանը պահապան զօրքի մեծաւոր կոմս Բօրխը, քաղաքագլուխը խորհրդի ձայնաւորների հետ և մի քանիսը տեղական տիկիններից։ Նոցին Մեծութիւնների անցած փողոցները համակարգուած էր զարդարանքներով, մի կողմից զօրախումբը առանց հրացանների, իսկ միւս կողմից տեղացի բնակիչները, որոնք ընտրուած էին խորհրդից կարգապահութեան վերայ հսկելու։ Կայարանը շինուած էր մաւրիտանական ճաշակով, որ ներկայացնում էր ամենագեղեցիկ տեսարան, այնպէս՝ որ չէր ճանաչվում բոլորովին ծածկուած լինելով բոյսերի և ծաղիկների կանաչ փնջերով։

Օրուայ 1½ ժամին երեւեցաւ կայսերական գնացքը շքեղ զարդարուած կանաչներով և դրօշակներով և կայարանից լսուեց հանդիսաւոր «Ուրան», որը աստիճանաբար թնդում էր հեռու և հեռու դէպի քաղաք տանող ուղղութեան վերայ համախմբուած հաղարաւոր բազմութեան՝ փողոցների պատշգամբների, լուսամուտների և շինութեանց կտուրների վերայ։ Այդ ժամանակ արքայական սենեակների վերայ բարձրացաւ կայսերական դրօշակը և որոտաց կասպեան նաւատորմղի ողջունող թնդանօթաձգութիւնը։ Վագոնից դուրս գալու ժամանակ Նոցին Կայսերական Մեծութիւնք թագաժառանգ արքայի և մեծ իշխան Գէորգի Ալէքսանդրովչի հետ միասին բարեհաճեցին ըն-